ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՋԻՆՋ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1920-1923 թթ.

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի և նրա դաշնակիցների պարտությունը, երիտթուրքերի կառավարության կործանումը, Օսմանյան կայսրության փլուզումը կարծես թե հնարավորություն էին ընձեռելու հայությանը շունչ քաշել, դարմանել 1915-1916թթ. ցեղասպանության վերքերը և ոտիներ որոնել դառնալու սեփական հայրենիքի և ճակատագրի տերը: Սակայն այն նույն ժամանակ, երբ Հայոց ցեղասպանության կազմակերպիչներն ու իրականացնողները դատվում էին թուրքական զինվորական ատյանի կողմից, Թուրքիայում ծավալվում էր Մուստաֆա Քեմալի գլխավորած թուրք-ազգայնական շարժումը: Ինչպես հայտնի է՝ քեմալականների գաղափարախոսությունը և ծրագրային նպատակները պաշտոնական ձևակերպումներ ստացան 1919թ. հուլիս-սեպտեմբերին Էրզրումում և Սվազում տեղի ունեցած համաժողովներում:[1] Այդտեղ հնչած ելույթները և ընդունած որոշումները կասկած չէին հարուցում, որ քեմալականները ոչ միայն չեն հրաժարվելու սուլթանական և երիտթուրքերի կառավարությունների հայաջինջ քաղաքականությունից, այլև հանդիսանալու են դրա անմիջական շարունակողը: Դասեր չքաղելով զինվորական տրիբունալի դատավճիռներից, Քեմալը համոզում էր, որ պատերազմի տարիներին բազում հալածանքների ենթարկելով մուսուլմաններին, հայերը կոպտորեն վիրավորել են թուրք ժողովրդի արժանապատվությունը: Նման զրպարտանքներով բորբոքելով հայատյաց տրամադրություններ, քեմալականները կոչ արեցին ամեն գնով Թուրքիայի կազմում պահել Արևմտյան Հայաստանը: Քեմալը հայտարարում էր, որ ոչ միայն գեթ մի թիզ հող անգամ չեն զիջելու Հայաստանին, այլև կգործադրեն հնարավոր բոլոր միջոցները՝ կանխելու հայկական անկախ պետականության ստեղծումը:

Էրզրումի և Սվազի համաժողովներում քեմալականների մշակած ծրագիրը և նպատակները բանաձևվեցին 1920թ. հունվարի 28-ին Կ. Պոլսում թուրքական ազգային ժողովի մշակած և ընդունած «Թուրքական ազգային ուխտ» կոչվող ծայրահեղ ազգայնամոլական օրենք-փաստաթղթում: «Ուխտը» հռչակում էր, որ «հայկական համայնքի ստեղծումը» կանխելը պետք է լինի յուրաքանչյուր թուրքի սրբազան

գործը: 1920թ. ապրիլի 23-ին, ստանձնելով Անկարայում ձևավորված թուրքական նոր պառլամենտի կազմավորած կառավարության ղեկավարի պաշտոնը և առաջնորդվելով իր կողմից հնչեցրած «Մենք կապրենք կամ կկործանվենք Ազգային ուխտի հետ միասին» կարգախոսով, Քեմալը կանգնեց Թուրքիայում ոչ թուրք ազգերի բռնաձուլման կամ բնաջնջման ուղու վրա: Այսպիսով, սկսվում էին տարիներ, փոխվում էին կառավարությունները, փոխվում էր միջազգային իրավիճակը, բայց անփոփոխ էր մնում թուրքերի հայատյաց պետական քաղաքականությունը:

Իրենց նախորդների սկսած գործն ավարտելու մտադրությամբ՝ քեմալականները շարունակեցին հայ ժողովրդի բնաջնջումը ինչպես Թուրքիայում, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Այդ խնդրում նրանք օգտագործեցին երիտթուրքերի ձեռք բերած «մեծ փորձը»: Ինչպես հայտնի է՝ լինելով պանթուրքիզմի եռանդուն ջատագով, երազելով դառնալ «Մեծ Թուրանի» ստեղծողն ու միանձնյա ղեկավարը, Քեմալը մտադրվել էր վերջնականապես ոչնչացնել դրա ճանապարհին մխրճված հայկական սեպը: Պատահական չէ, որ արդեն 1920թ. ապրիլի 26-ին Մ. Քեմալը ՌՄՖԽՀ կառավարությանը պաշտոնապես առաջարկեց անհրաժեշտության դեպքում «ռազմական գործողություններ վարել իմպերիալիստական Հայաստանի դեմ»:[2] Նշենք, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարության ուղղված այս նամակը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության առաջին արտաքին քաղաքական ակտն էր: Սա ևս մեկ ծանրակշիռ ապացույց է, որ քեմալական շարժման առաջնային նպատակներից էր՝ վերջնականապես մաքրել Թուրքիան հայերից, հնարավորության դեպքում՝ ոչնչացնել նաև արևելահայությանը:

1920թ. գարնանը, քեմալականների անմիջական օգնությամբ Աղրբեջանի մուսավաթականների բանդաները կազմակերպեցին և իրականացրեցին Շուշիի ավելի քան 30 հազար հայերի սպանդը: Օգտվելով կիլիկիահայության նկատմամբ ֆրանսիական կառավարության մեղմ ասած՝ մերժելի քաղաքականությունից, քեմալականները 1920թ. ընթացքում կոտորեցին կամ բռնագաղթեցրին Ուրֆայի, Մարաշի, Սասունի, Այնթափի, Հաճնի, Զեյթունի տասնյակ հազարավոր հայերի:

Հայ ժողովրդի դեմ քեմալականների ոճրագործությունների գագաթնակետը հանդիսացավ նրանց ռազմարշավը Արևելյան Հայաստան, 1920թ. աշնանը: Օգտվելով միջազգային բարդ իրադրությունից, Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունների որդեգրած թուրքանպաստ արևելյան քաղաքականությունից, քեմալականներին հաջողվեց հետամուտ լինել պանթուրքիզմի ծրագրերի իրականացմանը: 1920թ. սեպտեմբերի սկզբին Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի որոշումներում և այնուհետև՝ «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» մշակած փաստաթղթում Հայաստանը մեղադրվեց իմպերիալիզմին դաշնակից լինելու մեջ, կոչ արվեց «սրբազան պատերազմ հայտարարել նրան» և քեմալականների օգնությամբ խորհրդայնացնել այն:[3] Սրանից մի քանի օր անց քեմալական զորքերը դավաղրաբար ներխուժեցին Հայաստան: Այդ նույն ժամանակ (սեպտեմբերի 29-ին) ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշեց «... փողով և զենքով փաստացի օգնություն ցույց տալ քեմալականներին»:[4] Միանշանակ է՝ եթե չլինեին Հայաստանի խորհրդայնացման բոլշևիկյան ծրագրերը, նրանց աջակցությունը, քեմալականները չէին համարձակվի ներխուժել Արևելյան Հայաս-

տան, ինչպես հրաժարվեցին այդ մտքից 1920թ. ամռանը, հարցը կապելով «բոլշևիկյան կառավարության և Թուրքիայի ընդհանուր փոխհարաբերությունների հետ»:[5]

Ինչպես խոստովանում էր Քեմալը, թուրք-հայկական պատերազմում Թուրքիայի նպատակն էր՝ «... ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը»[6], իսկ թուրքական բանակի Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Ալի Ֆուադ Ջեբեսոյին սեպտեմբերի 14-ին ուղղված նամակում Քեմալը հուշում էր, որ «պետք է չհրաժարվել նաև Ադրբեջանը Թուրքիային միացնելու մտքից»:[7] Այսպիսով, ինչպես իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, «... քեմալականների թուրքիզմը չէր սահմանափակվում «Նոր Թուրքիայի» շրջանակներով, այն պետք է վերաճեր և, իրոք, վերաճեց պանթուրքիզմի»:[8]

1920թ. թուրք-հայկական պատերազմը, փաստորեն, ավարտվեց Հայաստանի պարտությամբ: Հայոց կազմալուծված ու բարոյալքված բանակի պարտությունները ոչ միայն հանգեցրին թուրքերի կողմից հայկական նորանոր տարածքների՝ Կարսի մարզի, Ալեքսանդրապոլի գավառի բռնագրավմանը, այլև, ինչն առավել ողբերգական էր, հայ ժողովրդի մի ստվար զանգվածի ոչնչացմանը:

Քեմալականների կողմից Արևելյան Հայաստանում իրականացրած վայրագությունների մասին փաստագրական հարուստ նյութեր են պահվում ինչպես Հայաստանի, այնպես էլ օտարերկրյա արխիվներում: Նրանցից շատերը մտցված են գիտական շրջանառության մեջ: Դրանք՝ ինչպես կոտորածներից փրկվածների, ականատեսների ցուցմունքները, խորհրդային իշխանության տարբեր մարմինների կողմից կազմված պաշտոնական զեկուցագրերն ու տեղեկագրերն, այնպես էլ օտարերկրյա անհատ քաղաքացիների և կազմակերպությունների ներկայացուցիչների արժեքավոր վկայություններն են: Բազմաբնույթ փաստաթղթերը կարևոր և անժխտելի ապացույցներ են Արևելյան Հայաստանում 1920-1921թթ. քեմալականների գործադրած ոճրագործությունների մասին:

1920թ. հոկտեմբերի 30-ին մտնելով Կարս, Կարաբեքիր փաշայի քեմալական զորքերն ձեռնամուխ եղան խաղաղ հայ բնակչության կոտորածին: Միաժամանակ իրականացվեցին զանգվածային ձերբակալություններ, պետական և մասնավոր ունեցվածքի կողոպուտ, այլ բռնություններ: Ռազմագերիները և ձերբակալվածները, որոնց թիվը հասնում էր մոտ երեք ու կես հազարի, աքսորվեցին Էրզրում՝ տաժանակիր աշխատանքների. նրանց մեծ մասը ոչնչացվեց ինչպես ճանապարհին, այնպես էլ աքսորավայրերում: Դաժան ճակատագրի արժանացան նաև Կարսում ամերիկյան «Մերձավոր Արևելքին օգնության» կազմակերպության խնամքի տակ գտնվող 6 հազար որբ հայ երեխաները: Նրանց միայն չնչին մասը մնաց Հայաստանում: Փոխարենը՝ Էրզրումից Կարս տեղափոխվեցին 2 հազար թուրք որբեր: Ընդհանուր առմամբ Կարսում և նրա շրջանում կոտորվեցին շուրջ 15 հազար հայեր: Նշենք, որ բռնությունների ենթարկվեցին նաև Կարսի շրջանի մալականների տասնյակ գյուղեր, մի շարք օտարերկրյա քաղաքացիներ: Հետաքրքիր են դրանցից մեկի՝ ռումինացի Վասիլի Իոնեսկոյի (որը մեկ ամիս գտնվելով թուրքական գերությունում անձամբ էր կրել վերջինիս դաժանությունները) վկայությունները: Վրաստանում ՀՍԽՀ ներկայացչությանն ուղղված գրությունում տուժողի աչքերով ներկայացնելով քեմալականների վայրագությունները, Իոնեսկոն, մասնավորապես,

վկայում է. «Քաղաքում ահավոր սպանդ էր տիրում, իմ աչքի առջև մի խումբ կանայք, խուսափելով ձերբակալությունից, նետվեցին Կարասաչայ գետը: Ձերբակալվածներիս օրերով ոչ միայն հաց, անգամ ջուր չէին տալիս, ամբողջովին մերկացրել էին, եղան տղամարդկանց բռնաբարություն դեպքեր: Աքսորի ճանապարհին ձերբակալվածները ենթարկվում էին զանազան խոշտանգումների: Ազատվելուց հետո Կարսում դոկտոր Նուրի-բեյից տեղեկացա, որ քաղաքում կոտորվել է 8 հազար հայ, բայց իմ դիտարկումներով՝ նրանց թիվը պետք է կազմի 10-12 հազարից ոչ պակաս: Գրեթե բոլոր կանայք բռնաբարված և վարակված էին, շատերը սովամահ էին լինում, թալանված էր ամեն ինչ, հայերի բռնագրավված խանութներում առևտուր էին անում թուրքերը»:[9]

Քեմալականների վայրագությունները առավել մեծ չափերի հասան Ալեքսանդրապոլում (Գյումրի) և գավառում: Զինագրավման առաջին իսկ օրերից թուրքերն անցան բնակչության կազմակերպված կոտորածին ու ձերբակալություններին: Միաժամանակ սկսվեց շրջանի պետական ունեցվածքի թալանը և տեղափոխումը Թուրքիա: Դրան հետևեց մասնավոր անձանց թալանը՝ քաղ առ քաղ, տուն առ տուն: Դիմադրողները տեղն ու տեղը սպանվում էին: Առանձնակի ատելության և դաժանության էին արժանանում Ալեքսանդրապոլում ապաստան գտած արևմտահայ գաղթականները, որոնց թուրքերն արհամարանքով անվանում էին «մշեցի աղամ (մարդ)»: Գավառում գործում էին թուրք կառավարիչներին ծառայող գործակալների հատուկ խմբեր (հիմնականում Աղբաբայի թաթարներ), որոնց կազմած ցուցակներով ձերբակալվում և խոշտանգվում էին քիչ թե շատ ունևոր հայեր: Հարկ է նշել, որ տեղացի թաթարներն ակտիվ մասնակցում էին հայերի սպանդին ու թալանին և իրենց դաժանությամբ շատ դեպքերում գերազանցում քեմալականներին:

Ալեքսանդրապոլի գավառում թուրքերի իրականացրած ոճրագործությունների ահավոր պատկերը բացահայտվեց 1921թ. գարնանը, երբ Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների և Կարմիր բանակի հրամանատարության սպառնալից վերջնագրերը ստիպեցին քեմալականներին ընդմիշտ հեռանալ գավառից: Քաղաքը և գավառը իսկական դժոխքի էին վերածվել, ամենուրեք երևում էին թուրքերի վեցամսյա զինագրավման զարհուրելի հետքերը: Գավառի գրեթե բոլոր գյուղերի արվարձաններում հայտնաբերվեցին հազարավոր հայերի դիակներ. դրանցից շատերը ահավոր խոշտանգված էին: ՀՍԽՀ պետական հանձնաժողովի 1921թ. մայիսի 11-ի արձանագրությամբ՝ միայն Ղալթաղչի, Աղբուլաղ և Ղարաբոյա գյուղերի շրջանում հայտնաբերվել էր շուրջ 12 հազար դիակ, մեծ մասը կանայք և երեխաներ: Նույն պատկերն էր նաև Ալեքսանդրապոլում: Թուրքերի գազանությունների մասին Քաղաքային Դումայի զեկուցագրերից մեկում նշվում է, որ հատկապես մեծ թվով սպանվածներ են գտնվել քաղաքի կայազորի պետի, պարետի, ոստիկանապետի ապրած տների նկուղներում:[10] Սա վկայում է, որ հայերի կոտորածը կրում էր կազմակերպված բնույթ և արտոնված էր քեմալական ղեկավարության կողմից: Ընդհանուր առմամբ Ալեքսանդրապոլի գավառի զինագրավված շրջաններում պետական հանձնաժողովի մոտավոր պաշտոնական տվյալների համաձայն 1920թ. նոյեմբեր - 1921թ. ապրիլ ամիսներին քեմալականները սպանել էին 30 հազար տղամարդ, 25 հազար կին և աղջիկ, 5 հազար երեխա, սովամահ է եղել ավելի քան 30 հազար մարդ, գերության քշվել՝ 25 հազարը, որոնց

զգալի մասը ոչնչացվել է, բռնաբարվել է շուրջ 50 հազար կին և աղջիկ, իսկ հասցրած նյութական վնասը կազմել է մոտ 20 մլն. ռուբլի ոսկով:[11]

Ահա թե ինչպիսի ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի պարտությունը 1920թ. թուրք-հայկական պատերազմում: Պետք է խոստովանել, որ քեմալականների՝ Արևելյան Հայաստանում կատարած ոճրագործությունները նման ահռելի չափերի չէին հասնի, եթե Հայաստանի դաշնակցական կառավարությունը և հայկական հրամանատարությունը ժամանակին հոգային Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանների հայ բնակչության էվակուացիայի մասին, նահանջելու հնարավորություն ընձեռեին: Արխիվային շատ վկաստաթղթերում անթաքույց արդարացի մեղադրանքներ են ներկայացվում իշխանություններին, որոնք բախտի քմահաճույքին թողեցին խաղաղ բնակչությանը: Մեղքի իրենց բաժինն ունեին նաև կոմունիստ հայերը, Հայաստանի նոր՝ խորհրդային իշխանությունները: Նրանք նախ համոզում էին, որ քեմալականներին դիմադրել հարկավոր չէ, որ նրանք գալիս են ժողովրդին փրկելու դաշնակներից, իսկ այնուհետև՝ Ալեքսանդրապոլում ստեղծեցին Հեղկոմ, որը կոչված էր «թուրք բոլշևիկների» հետ համատեղ ապահովել օրինականությունը և բնակչության անվտանգությունը: Բայց Հեղկոմը լիովին անզոր էր և արհամարանքի, ավելին՝ բռնությունների էր ենթարկվում քեմալականների կողմից: Հեղկոմը շատ շուտով համոզվելով, որ քեմալականները ոչնչով չեն տարբերվում, անգամ գերազանցում են երիտթուրքական դահիճներին, այդ մասին բազմիցս տեղեկացնում էր Խորհրդային Հայաստանի իշխանություններին: Վերջիններս էլ շտապում էին քեմալականների ոճրագործությունների մասին ահազանգել Մոսկվա և Անգորա: Սակայն բոլոր դիմումները, նոտաները, պահանջները որևէ ազդեցություն չունեցան. դա խոստովանում էին անգամ բոլշևիկների առաջնորդները՝ զարմանքով արձանագրերով, որ Հայաստանի խորհրդայնացումը որևէ փոփոխություն չմտցրեց քեմալականների հայաջինջ քաղաքականության մեջ: Մինչդեռ հայ ժողովուրդը համոզված էր, որ «Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման փաստն իսկ սթափեցնող ներգործություն կունենա Քեմալի վրա, - նշվում է արևմտահայ մի խումբ գաղթականների դիմումում Մոսկվա՝ Լենինին, Ստալինին, - սակայն նա շարունակում է ավերել նաև Խորհրդային Հայաստանը, իսկ նրա իշխանություններին հաշվի չի առնում և արհամարում է»: Գաղթականները հույս էին հայտնում, որ Ռուսաստանը վճռական քայլերի կդիմի և կփրկի Խորհրդային Հայաստանը հետագա ավերումից:[12] Բայց գործը դիվանագիտական ճնշումներից այն կողմ չանցավ:

Այսուհանդերձ, պետք է նշել նաև, որ Հայաստանի խորհրդայնացումը կանխեց քեմալականների չբացառված ներխուժումը Արարատյան դաշտավայր և Հայաստանի խորքերը. չէ որ սկսելով պատերազմը քեմալականները ծրագրել էին ինչպես քաղաքականորեն, այնպես էլ փաստացի ոչնչացնել Հայաստանը:

Քեմալականների վայրագությունները հայ ժողովրդի նկատմամբ շարունակվում էին: Հայաստանում ՌՍՖԽՀ ներկայացուցիչ Լեգրանին 1921թ. ամռան սկզբին հղած հեռագրում ՀՍԽՀ արտգործժողկոմ Մռավյանը հուշում է, որ Կարսից ստացված տագնապալի տեղեկությունների համաձայն, թուրքական իշխանությունները շարունակում են հայերի բնաջնջման հին քաղաքականությունը, հայ բնակչության մնացորդները աքսորվում են Թուրքիայի խորքերը: Մռավյանը խնդրում է միջոցներ ձեռ-

Հայաստանի ազգ. Գրադարան

նարկել՝ կանխելու հայերի բնաջնջումը:[13] Երևանում Թուրքիայի գլխավոր հրամանատարության ներկայացուցչին հունիսի 14-ին ուղղված գրությունում Մռավյանը տագնապ է հայտնում, որ թուրքական զինվորական մասերը հարձակումներ են իրականացնում Արփաչայի ձախ ափին գտնվող ՀՍԽՀ մի շարք գյուղերի վրա, թալանում և ավերում դրանք, քանդում են Արփաչայի վրա գտնվող կամուրջը և այլն:[14] Դիմումներն, իհարկե, որևէ արդյունք չտվեցին:

Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը, այդ ժամանակաշրջանում, շարունակվում էր նաև Թուրքիայում: Թուրք-հունական պատերազմի վերջին փուլում, հասնելով ռազմական շոշափելի արդյունքների, քեմալականները Թուրքիայի արևմտյան շրջաններում կոտորեցին տասնյակ հազարավոր հայերի և հույների: Առավել սահմռկեցուցիչ էին Իզմիրի (Զմյուռնիայի) ողբերգական իրադարձությունները: 1922թ. սեպտեմբերի 9-ին մտնելով քաղաք, քեմալական զորքերը և տեղի թուրք խաժամուժը սկսեցին խաղաղ հայ և հույն բնակչության սպանդը և թալանը: Չգտնելով թաքցնել վայրագությունների հետքերը, քեմալականները սեպտեմբերի 13-ին կանխամտածված հրդեհեցին քաղաքը, որի արդյունքում ոչնչացվեցին հազարավոր աներ, տասնյակ եկեղեցիներ, դպրոցներ, հիվանդանոցներ, այլ շինություններ: Հայերի և հույների կոտորածներ տեղի ունեցան նաև Իզմիրի արվարձաններում և նավահանգստում, որտեղ թուրքերը սառնասրտորեն խորտակեցին հազարավոր քրիստոնյա փախստականներով լցված նավերը: Եվ այդ ամենը կատարվեց եվրոպական ռազմանավերի անձնակազմերի աչքի առջև, որոնք որևէ փորձ չձեռնարկեցին օգնության հասնելու մահվան դատապարտվածներին:[15]

Իզմիրի ողբերգական իրադարձությունները և քեմալական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Կ. Պոլիս լուրջ անհանգստություն էին պատճառել Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը, քանզի Թուրքիայի մայրաքաղաքում ծայրահեղորեն սրվել էին ազգամիջյան հարաբերությունները, որոնք կարող էին հանգեցնել տեղի հայ բնակչության կոտորածին: Չգտնելով Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության միջոցով կանխել դեպքերի հնարավոր նման զարգացումը, 1922թ. հոկտեմբերի 11-ին Մոսկվա՝ Լենինին և Ստալինին հղած հեռագրում Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը հուշում էր. «Բոլոր տվյալներով հայերի զանգվածային կոտորածները և ջարդերը անխուսափելի են: Նպատակահարմար ենք գտնում բարեկամական ներգործություն ունենալ Անգորայի կառավարության վրա՝ կոտորածների և ջարդերի կանխման, անհրաժեշտության դեպքում՝ Խորհրդային Դաշնության սահմաններում փախստականների ընդունման և հանգրվանելու համար»:[16] Սրան հետևեց նաև ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Ալեքսանդր Մյասնիկյանի հոկտեմբերի 16-ի հեռագիրը Մոսկվա՝ Լենինին, Ստալինին և Չիչերինին: Տեղեկացնելով Թուրքիայում բնակվող հայերի թշվառ վիճակի մասին և հուշելով, որ Կ. Պոլսի 150 հազարանոց հայ բնակչության և Թրակիայի 50 հազարանոց հայ գաղութի մեջ տիրում է վախ և խիստ լարվածություն, իսկ շատերը խուճապահար լքում են քաղաքը, Մյասնիկյանը Ռուսաստանի իշխանություններից խնդրում է միջոցներ ձեռնարկել պաշտպանելու Կ. Պոլսի և, ընդհանրապես, Թուրքիայի հայության կյանքն ու արժանապատվությունը, Լոզանի կոնֆերանսում հանդես գալ հայերի պաշտպանությամբ և հնարավորություն տալ նրանց վերաբնակվել Անդրկովկասում և Ռու-

սաստանի դաշնությունում:[17] Ինչպես հայտնի է՝ Լոզանի միջազգային կոնֆերանսում ՌՍՖԽՀ պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինը, իրոք, հանդես եկավ նման հայտարարությամբ:

Այսպիսով, այն՝ ինչ իրականացրեցին քեմալականները Կիլիկիայում, Թուրքիայում և Արևելյան Հայաստանում 1920-1923թթ. հնարավոր չէ որակել այլ կերպ, քան հայ ժողովրդի ծրագրված, պետականորեն կազմակերպած և իրականացրած ցեղասպանություն, որի հետևանքով կոտորվեցին կամ սովից ու համաճարակներից մահացան շուրջ կես միլիոն հայեր, հարյուր հազարավորներ տեղահանվեցին իրենց հայրենի օջախներից, հայ ժողովրդին հասցվեց ահռելի նյութական և բարոյահոգեբանական վնաս: Ի հետևանք դրա՝ ինչպես հայտնի է քեմալականներին հաջողվեց ոչ միայն Թուրքիայի կազմում պահել Արևմտյան Հայաստանը, այլև Մոսկվայի և Կարսի ոչօրինական պայմանագրերով հայ ժողովրդից բռնազավթել նրա պատմական տարածքների արևելյան մի մասը, իսկ այնուհետև՝ Լոզանի միջազգային կոնֆերանսում, արևմտաեվրոպական դիվանագիտության հանդուրժողականությամբ՝ տապալել և երկար ժամանակներով գերեզմանել Հայկական հարցի արդարացի լուծումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Քեմալական շարժման ձևավորման մասին մանրամասն տե՛ս Ավագյան Ա. Հայոց ցեղասպանության գործոնը քեմալական շարժման ձևավորման մեջ, Երևան, 2000, էջ 101-107, «Հայկական հարց», մատենաշար, թիվ 1:

[2] Документы внешней политики СССР, т. 2, Москва, 1958, с. 725-726.

[3] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7,թ. 1-3:

[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, հավաքածու թիվ 1, գ. 2, թ. 106:

[5] Տե՛ս Աղայան Ծ. Պ. Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982, էջ 321:

[6] Кемаль М. Путь новой Турции, т. 3, Москва, 1932, с. 102.

[7] Տե՛ս Սիմոնյան Հր. Ռ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 511:

[8] Տե՛ս նույն տեղում:

[9] Տե՛ս Ներսիսյան Մ. Գ. Պատմության կեղծարարները, Երևան, 1998, էջ 308-310:

[10] ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 144, ց. 3, գ. 45, թ. 7:

[11] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 131, թ. 1:

[12] Նույն տեղում, ց. 2, գ. 35, թ. 34:

[13] Տե՛ս Ներսիսյան Մ. Գ. նշվ. աշխ., էջ 318:

[14] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 21, թ. 82:

[15] Տե՛ս Housepian M. The Smyrna Affair N. Y., 1971: Տե՛ս նաև Саакян Р. Г. Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., Ереван, 1986:

[16] РГАСПИ, ф. 5, оп. 2, д. 92, л. 43.

[17] Նույն տեղում, գ. 108, թ. 5:

Резюме

Кемалистская политика истребления армян в 1920-1923гг.

Карен Хачатрян

С начала 1919г. в Турции разрасталось турецкое национальное движение под руководством М. Кемаля. Програмные заявления кемалистов наглядно показывали, что кемалисты станут на путь истребления или насильной ассимиляции нетурецкого населения Турции. По отношению армянского народа кемалисты стали непосредственными продолжателями политики геноцида армян османского и младотурецкого правительств Турции.

В 1920-1923гг. кемалистами были осуществлены массовые истребления армян в Киликии и Измире, в Александропольском, Карском, Ахалкалакском уездах и в городе Шуши. В результате турецких злодеяний было истреблено, погибло от холода, голода и эпидемий около полумиллиона армян; угнано в плен, ассимилировано, насильно депортировано из родных очагов сотни тысяч армян. Все это не оставляет сомнений для квалифицирования злодеяний кемалистов как политически спланированный и осуществленный геноцид армянского народа.

Summary

The Kemalist Policy of Extermination of Armenians in 1920-1923.

Karen Khachatryan

From the beginning of 1919 Turkish national movement under the leadership of M.Kemal was growing in Turkey. The programme statements of the Kemalists showed that they would go along the path of extermination and violent assimilation of non-turkish population of Turkey. In connection with the Armenian people the Kemalists were direct successors of the policy of genocide by the Ottoman and Yangturkish governments of Turkey.

In 1920-1923 the Kemalists organized massacres of Armenians in Kilikia and Izmir, in Alexandropol, Kars, Akhalkalak districts and in Shoushy in Armenia. As the result of Turkish atrocities about half a million of Armenians were slaughtered, died from cold, hunger and epidemics, hundreds of thousands Armenians were captivated, assimilated, deported by force from their native places.

All these don't leave a shadow of doubt for the Kemalists' atrocities as politically planned and accomplished genocide.